

Ուրախ լեր դու եւ ցնծան  
 Ձի ի քէն ահա ծնանի  
 Ի Բեթղէհէմ քաղաքի  
 Փրկիչ մեղաց աշխարհի:

Այք նժղեհիդ քանանու  
 Արտասուալից ի քննին՝  
 Ցերբ եղեմայ կան անհետ  
 Ճանապարհին ի զննին:  
 Ձի տնկեցար դու ինքնին  
 Դրախտ եւ ծառ նոր կենաց,  
 Ու ի քեզ ի վրէժ հին մեղաց  
 Զաղխեսցի զուխ չար օձին:

Ի Խառանէ յեղիպտոս՝  
 Անդէն ընդ ծովն անց Կարմիր,  
 Անց էջ եւ ընդ անապատ՝  
 Եկ ի Սիօն դու հանդիր:  
 Ձի ուխտեցար ի մօրէ  
 Երկնաւոր դու փեսայի  
 Յուխտ կուտեթեան սրբութեան՝  
 Յուխտ փրկութեան աշխարհի:

Խնդա ցնծան կոյս Մարիամ,  
 Տես դասող Տեառն նորանշան.  
 Հնդիկ Արար եւ Պարսկական  
 Յարեւելից զայ կարաւան  
 Երկրպագել քո սուրբ մանկան  
 Յիսուս Փրկչին մեր աշխարհի  
 Բարձող մեղաց մօրն Եւայի:

Բացէք զգանձս ձեր, Բողոքասար,  
 Թագաւորք սուրբ Մելքոն, Գասպար,  
 Մատուցէք զառն եւ զուարակ,  
 Կնդրուկ զմուռս ի պատարագ  
 Նշան արեան եւ սուրբ զօնի  
 Յիսուս Փրկչին մեր աշխարհի  
 Բարձող մեղաց մօրն Եւայի:

ՍԱՄՈՒԷԼ ԳԻՒԼԶԱՏԵԱՆՑ.

## ՍՈՒՐԲ ՍԱՆԴՈՒԻՏ.

Գողգոթայ լերան վերայ բողբոջած կենսաբեր ծառոյն փրկարար սուրբ թեոցը ծերունին համբոյրը նուիրելով զաւազանը առաւ եւ սկսաւ վար ինջնալ. ուղեւոր է ծերունին, բայց ո՞ր, եւ ո՞ւր կերթայ: Պաղեստինու զաշտերէն ելաւ, աշխարհքներէ անցաւ, եւ առանց տեղ մի դադարելու ծանապարհը կշարունակէ: — Մտաւ Միջագետաց սահմանը, կեցած է, աչքերը չորս կողմը ձգած կնայի, կրիտէ թէ որ ծանապարհաւ պիտի երթայ անդ ուր ինքը զբրկուած է. եւ դարձեալ սկսաւ յառաջ ընթանալ:

Ահա այն ծերունին Առհա քաղաքին մէջ կպրտրտի. զգեստը անպաճոյճ, թեղանաւոր խորզ հագած է միակտուր առանց կարանի. մէջքը պարեգօտ, ոտքերը մերկ, բարձրահասակ եւ վտիտ, մազերը սպիտակախառն, ճակատը լայն եւ ահաւոր, հայեցուածքը շնորհալի եւ զբաւիչ, կերպարանքը թուխ բայց պատկառելի. յայտնի է թէ բնիկ երկրացի չէ, բայց ոչ որ չի հարցնել թէ ո՞ր եւ ուստի՞ եկած է: Սակայն ինքը կձանօթանայ շուտով բոլոր քաղաքին. հետաքրքիր ամբոխը իրերաց բերնէն լսելով նորեկ ծերունւոյն զալուստը, համեստ բարքը եւ կենակցութիւնը՝ կխոնի՛ կղիղուի, եւ ուր երթայ՝ ետեւէն կքալէ: Հրապարակաց մէջ կձառէ, նոր Աստուած եւ նոր ճշմարտութիւն կքարոզէ, հրաշալիք կպատմէ, սիրոյ եւ փրկութեան ահաւոր խորհուրդները կյայտնէ, որք ոչ հեթանոսք լսած էին, եւ ոչ քուրմք կրնային ճառել:

Հետաքրքրութեամբ և զարմացմամբ ժողովուրդը անձանօթ ծերունւոյն նորալուր քարոզութեանց մտիկ կանէր, — ո՞ր է կասէին իրերաց ծերունիս, ուստի՞, և ո՞ այս սքանչելիքներս իրեն սորուեցուցեր է միթէ՞ մեր քուրմք — չեն զիտեր, կամ ինչո՞ւ մեզ պատմած չեն այսպիսի սքանչելիք մեր աստուածոց վերայ: Աւստի կրտսերն զինքը և կյարգին, քարոզութեանցը կլանն, կցանկան ճանչնալ և պաշտել ճշմարիտ Աստուածը, որոյ անունը իւրեանց բազմաթիւ սնտախ կռոց մէջ չէր յիշատակուէր, և ոչ արձանը մեհնից մէջ նոցա կարգը կանգնած բազին և պաշտօն ունէր:

Բայց ինքը ծերունին զեսպան և ճշմարտութեան պատգամաւոր զրկուած է ի Հայաստան. մեծամեծ սքանչելիքներ պիտի պատմէ Հայոց. իրեն յանձնուած է ճշմարտութեան աւետիքը հռչակել նոցա, որոց ինքը ականատես կենաբեր փայտին սրտէն ընդունած պիտի ծաւալէ. ուստի թազաւորին ապարանքը կհարցնէ՝ որ երթայ պատգամները աւանդէ:

Իմաստուն զլիոյ վերայ արքունի թագը կձաճանչէր, խաղաղարար ձեռաց մէջ իշխանական զաւազանը իւր ուղղութիւնները կկարգադրէր, և երկինք զթութեան և ողորմութեան աջօք Հայաստանի վերայ նայելով կուզէր երկնային ճշմարտութեան շնորհաց փառօք ևս զինքը պսակել: Աւայս արժանի թագաւորը Արշամայ որդին Աբգարն էր, առ որ ծերունին պատգամաւոր զրկուած՝ ապարանքը կհարցնէր:

Թնդած քաղաքը նորեկ զեսպանին զալուստը լսելով. իմացան որ երկնաւոր Թազաւորի պատգամաւոր է, ուստի ընդ ա-

ռաջ զիմեցին որ զինքը ընդունին: Ասկայն զարմացած, «Միթէ՞ Աստուած, կասէին, որ մեզ երկնքէն զեսպան կրղրկէ, այսչափ աղքատ և կարօտ է, որոյ պաշտօնեայն անպաճոյճ, բոկոտն, մերկ և անշուք է. — ինչպէ՞ս հաւատանք որ ունի թագաւորութիւն, աշխարհ, աստղերէն վեր, և զօրութիւն քան մեր աստուածները առաւել»: Աւ ահա բոլոր քաղաքը վրդովեալ այս բանին վերայ կլսուէին: — Իսկ ծերունին զինքը շրջապատած բազմութիւնը ձեզքելով սկսաւ թագաւորին ապարանքը երթալ. թագաւորը ևս նորա զալստեան կսպասէր, բայց ժամանակը չէր զիտեր, որ ոչ եթէ իւր հնացեալ անբուժելի ախտէն զինքը պիտի բժշկէր, այլ և աստուածային ճշմարտութեամբ լուսաւորէր:

Անգնած է ահա թագաւորին առաջ, և ահաւոր ձայնիւ պատգամները կաւետէ, իսկ թագաւորը թազով և հոգով զետին խոնարհած կլսէ. ընդունեց նորամէ բժրշկութիւն և օրհնութիւն, հաւատաց քարոզութեանցը, և հրաման տուաւ որ վաւազանին հնազանդ Հայաստանի մէջ ևս այն պատգամները հռչակէ:

Արշակունի խրոխտ արծիւը՝ որ ի վերին Հայաստան բարձրաթռիչ ձախրելով կրթօթափէր թեւերը Օգոստոսի և անօրէն ներովզէսի դէմ, ուրիշ հակառակորդ արծիւ մի ևս Արշակունի տանը արքունի բունէն թռչելով ի Շաւարշան Արտազ դաւառին մէջ Աբգարու քեռորդոյն նորապսակ Մանատրիոյ զլեուն վերայ թեւատարած կսաւառնէր, և կհռչակէր Հայոց նորա թագաւորութիւնը: Իսկ վերին Հայաստան խաղաղասէր և հաւատացեալ

Թագաւորէն զրկուած՝ արքունի զահր  
 Թափուր սևաթոյր քօղով պատեալ էր.  
 որոյ պատուանդանին վերայ Հայոց հրեշ-  
 տակը նստած կցօղէր, և քնարն ի ձեռին՝  
 որով երբեմն Հայկազն Տիգրանայ, Արշա-  
 կունուոյն Աշղարշակայ և զիւցազանց  
 մահը ողբացեր էր, կրկին զողորջուն մա-  
 տունքը լարէ ի լար տխրագին յածելով,  
 կհրաւիրէր իւր հետ բոլոր աշխարհը ա-  
 սաքինի Թագաւորին մահը ողբալ: Այ-  
 նուհետև հակառակորդը արծիւր կզօրա-  
 նայր, և ուժեղ թևերը թօթափելով կը  
 թռչէր մինչև աշխարհին զագաթը, ուստի  
 Հայոց Մանատրիոյ Թագաւորութիւնը  
 քարոզելով, մեծամեծ բարեաց ակնկալու-  
 թեանց աւետեօք կհրաւիրէր ազգը ի հը-  
 նազանդութիւն և յերկրպագութիւն թա-  
 զասրակ Արշակունուոյն երեսաց:

Իսկ Մանատրուկ՝ որպէս զի արքունա-  
 կան ծիրանին բոլոր աշխարհին վերայ և ս-  
 տարածէ, Թագաւորավայել ճոխութեամբ  
 մեհնից մեջ մեծամեծ հանդէսներ կատա-  
 րել կուտար, ուր և ժողովուրդը նուէրնե-  
 րով կղիմէր և կլսէր զից պատգամները:  
 Եւ ահա բոլոր աշխարհին մեջ նոցա յա-  
 ջող պատգամները կհնչէին. «Նանեական  
 մեհնանէն Արամազդայ աղջիկը Թագաւո-  
 րութիւնը կհաստատէր, սպիտակափառն  
 Բարշեմինիս զիք խնամակալութեան աշ-  
 խարհը կյանձնէին, և Մրհական բազի-  
 նէն Արամազդայ որդին սպառնալով, կո-  
 ըտտար զից հօրը շանթերը տեղալ ի վերին  
 Հայաստան, և խանձել երեկ Միջագե-  
 տաց աշխարհը»:

Մանատրայ ամենաբեր հիւրընկալ զից  
 Ամատորի առաւօսն էր. — նոյն օրը Ափ-  
 րողիտայ մեհնին մեջ Թագաւորութեան

հանդէսը կկատարուէր: Թագաւորը իւր  
 ամենայն փառաց շքեղութեամբ պերճա-  
 ցեալ բազնին առջևը կանգնած էր, շըր-  
 ջապատած էին զինքը նախարարք, իշ-  
 խանք և զօրավարք. ասնն ասնն նուագա-  
 րանք կըէր և կրկին կհնչէր, մինչև քըր-  
 ժապետը աղօթք և օրհնութիւն սկսաւ  
 կարդալ. և Թագաւորական խոյրը զլուխը  
 կտակելով գաւազանը ընծայեց և ասաց,  
 «Կշնորհն քեզ զիք ժողովրդեանս Թագրը  
 և կյանձնեն խնամոցդ աշխարհս»: Այ-  
 նուհետև Թագաւորին կենաց բիւրաւոր  
 զոհեր կտրուելով մինչև ցերեկոյ մրտաեալ  
 բաղինները ձենձերելով կմխային. քուրճք  
 բազինը բորբոքելով ջերմեռանդութեամբ  
 կազօթէին, իսկ քրմապետը զոհից ընդեր-  
 քը գննելով յաջող պատգամներ կուտար,  
 կզուշակէր զահին հաստատութիւնը,  
 յաղթութիւններ՝ և աշխարհներ, նոցա  
 դանձերը կխոստանայր:

Այսպէս զուճակաւ զուճակաւ ժողովուրդը  
 և ս. տաճարին ներքին սրահին մեջ՝ ուր  
 ինքն չքնադազեղն Ափրողիտէ կանգ-  
 նած էր, դեռ ահա օրիորդք և նորասր-  
 սակ հարսեր ծագկամքք պսակուած դաս  
 դաս բաժնուած էին. ոմանց ձեռքը թըմ-  
 բուկ և ոմանց քնար՝ բազնին չորս կողմը  
 կպարկին երգելով, և երբեմն լռելով՝ օրի-  
 որդաց մէկը այս կերպէր առանձին. «Քո  
 խնամակալութեան կյանձնենք մեր նորա-  
 պակ Թագաւորը և մեր հայրենիքը. դու  
 մեր զիւցազանց և Թագաւորաց աստուա-  
 ծընես» և կրկին թմբուկները զարնելով  
 կըթնդայր մեհնանը նոցա երգոց արձա-  
 դանքէն:

Արջին նոխազը բազնին քով մայե-  
 լով կը առաջէր ընկերակցացը ետեւէն, և

քրմապետը հրաման տուածին զէս զոհա-  
 դործ քուրմը գաշոյնը պարանոցին վերայ  
 շողացնելով բազինը արեամբ կնեկէր. ու-  
 րոյ ձենձերեկէն յետոյ ժողովուրդը ընդար-  
 ձակ դաւթին մէջ հաւաքուած էր, ահա  
 յանկարծ մեհնին ըստճրաւանդակ սեւոց  
 վերայ անձանօթ մի ձերունի երեւցաւ.  
 այս այն Պաղեստինացին է՝ որ Միջագե-  
 ասաց աշխարհին մէջ դեռ պանութեան  
 պաշտօնը կատարելով ի Շաւաշարշան  
 կերթար. և մինչդեռ ժողովուրդը կուզէր ի-  
 մանաւ թէ ո՞ր և ուստի՞ է, ահա նոյն  
 բարձրաւանդակէն զոչեց ամբօխին. «Մից  
 պաշտօնասէր ժողովուրդ, կտանեմ զձեզ  
 ցանկացող ճշմարտութիւնը լսել. ահա  
 եկեր եմ երկնային պաշտօնատարութեամբ  
 նոյնը ձեզ քարոզել. եկեր եմ ճշմարիտ  
 Աստուածը ձեզ յայտնել զոր զուք չէք  
 ճանչնար, և մոլորեալ խաբուած դրոշկոց  
 կձառայէք» : Ամբօխը մէկէն դարձաւ ե-  
 րեսը նայեցաւ, խառնաձայն աղաղակ լը-  
 սուեցաւ, վաղեցին պատեցին զինքը, և  
 սպառնալից ձայներով կոչուն. «հայհոյեց  
 զղիս, հայհոյեց մեր չքնաղաղեղն Ափրո-  
 ղիտէ, մահու արժանի է» :

Իսկ Պաղեստինացին անվերջով ամբօ-  
 քին սպառնալիքներէն՝ նոյն բարձրաւան-  
 դակին վերայ կեցած է, որոնք խառնաձայն  
 աղաղակներով կվազին զլսուէն կթափին,  
 և պարանոցէն կախուած խաչը ձեռքը բռ-  
 նած՝ կրկին ամբօխին կկանչէ. «Չեզ պատ-  
 մելիք ճշմարտութիւնըս այս Խաչին վերայ  
 է. սուտ է Ափրոզիտէ, սուտ են զիք, և  
 սնտոի ձեր ամենայն պաշտամունքը» : Ամ-  
 բօխը զայրացած հեթանոսական օրինօք  
 կուզէ յօռ ժամայն վրէժխնդիր լինել կոոց  
 պատիւը պահելու համար՝ խողխողելով

զինքը նոցա բազնաց վերայ. քրմապետը  
 կատարած, մանաւանդ թէ ահարեկեալ,  
 զողալով կկանչէ, մեհնանը կըթնդացնէ,  
 անէճք կկարգայ, վճիռ կըկարէ, և վրէժ-  
 խնդրութիւն կըողորքէ. քուրմը իրենց քր-  
 մապետին կատարութեանէն զգածեալ՝ ու-  
 մանք զոհին համար պահուած տապար-  
 ներով՝ և ոմանք գաշոյներով գազանային  
 մոլեղնութեամբ մեհնէն զուրս կյարձա-  
 կին, և Պաղեստինացոյն զլսէն ի վայր  
 շողացնելով կաղաղակեն ամբօխին. «ոչ  
 ձեր զոհերով և ոչ մաղթանքներով կը-  
 հաշտուի մեզ հետ չքնաղաղեղն Ափրո-  
 ղիտէ, եթէ ոչ նորա արեամբ որ զինքը ա-  
 նարզեց» : — Իսկ արքունեաց մէջ այս  
 լուրը իմացուած էր, ուստի զունդ մի գօրք  
 թագաւորին հրամանաւ հասաւ յափրշ-  
 տակից զՊաղեստինացին քրմաց տապա-  
 րաց բերնէն, և տարին ապարանք :

Ժողովուրդը վրէժխնդրութեան ոգով  
 ետեւէն կընթանայր, որ վկայէ թագաւո-  
 րին նորա գատապարտութեան յանցանքը  
 և ախանառն լինի սպանմանը. իսկ քր-  
 մապետը պաշտօնակից քուրմերէն ոմանք  
 հետը առնելով՝ քան զմահապարտը յա-  
 ուած կհասնէր և կպատմէր թագաւորին  
 Պաղեստինացոյն յանդնութիւնը, և զից  
 արած նախատինքը. և որպէս զի թագա-  
 ւորը ի վրէժխնդրութիւն շարժէ՝ այսպէս  
 խօսքը կըկնքէր. «Այս ուրախութեան օրս՝  
 որ զիք զքեզ աշխարհիս թագաւոր կպը-  
 սակեն, զուցէ իրենց արդար բարկութեամբ  
 զմեզ և բոլոր աշխարհս պատուհասեն ե-  
 թէ վրէժխնդիր չլինիս» :

Խոռովեցաւ թագաւորը և այլազունե-  
 ցաւ, բայց զեռ մահապարտը տեսած չէր.  
 յանկարծ արքունի ապարանաց դրան քով

խառնաձայն աղաղակ փրթաւ, և երկու սուսերաւոր թիկնապահներով Պաղեստինացին ներս մտաւ: Անդհաճ է համեստ և աներկիւղ հեթանոս թագաւորին ղիմաց, կսպասէ լսել հարցմունքները և պատասխանել. հրաման տուաւ թագաւորը որ նուագարանը լռէ, երկար ատեն վրէժխնդիր աչքերը վրան անկած ղիտեց, վերջապէս «Մ՛վ ես դու զոչեց, անձանօթ ծերունի, և ուստի՞ եկար իմ աշխարհս, ինչպէ՞ս յանդգնեցար նոր աստուած քարոզելով խաղաղասէր ժողովուրդս վրդովել, և թագաւորութեանս պաշտպան ղից անունը նախատել: Ի՞մ նախնիքս զերենք պաշտած՝ ես այսօր նոցամէ թագաւորութիւնս պարզե կստանամ. Հայաստան ուրիշ աստուծոյ անուն լսած չէ, ո՞ քեզ սորուեցուց այդ անունը, ո՞ առաջնորդեց քեզ և բերաւ իմ աշխարհս»:

«Թաղէոս եմ ես, պատասխանեց Պաղեստինացին, ճշմարիտ Աստուծոյ աշակերտը և առաքեալը. Պողոթա լեռնէն կուգամ, և քեզ անտի ճշմարտութիւն կբերեմ, ուր Աստուած խաչափայտի վերայ բարձրանալով քարոզած օրէնքները արեամբը կնքեց»:

«Մ՛վ է աստուածդ, մանչեց թագաւորը զահէն ցատկելով, և ի՞նչ են ճշմարտութիւնքը»:

«Ես ականատես վկայ եմ այն ճշմարտութեանց, պատասխանեց Թաղէոս, իրմէ զատ ուրիշ Աստուած չկայ. սնտաի և սուտ են ամենայն ձեռագործ օսկեձոյլ դրօշեալք»:

Թագաւորը զայրացեալ Թաղէոսի աներկիւղ պատասխաններէն, մանաւանդ քրմաց աղաղակէն ահաբեկեալ՝ որ միաբե-

րան կգոչէին, «Մահապարտ է, արժանի է մահու», կուզէր անմիջապէս մահուան վճիռը տալ յանձնելով զինքը ղից պաշտօնէից ձեռքը. բայց կմտածէր նաև ազատ արձակել, հանել զինքը նոյն օրը թագաւորութեան սահմաններէն, և չէր ուզէր այն ուրախութեան օրը ձեռքը արեամբ ներկել:

Թագաւորին երեսին վերայ յայտնի կերևի հոգւոյն տազնապը, ուստի դարձաւ հարցուց կրկին, «Պատմէ ինձ Թաղէ, ուստի՞ գիտես դու այդ օրէնքները, ո՞ է թագաւորդ որ ղրկեց զքեզ իմ աշխարհս, անունն ի՞նչ է, և ո՞ւր նորա թագաւորութեան աշխարհը»:

«Աստուած ինքն, որ միայն ճշմարիտ Աստուած է, պատասխանեց Թաղէոս, նամեզ իւր օրէնքները սորուեցուց. թագաւորութիւնը երկինքն է, և մեք նորա արարածքը եմք: Պիտի տեսնես և դու, ո՞ թագաւոր, նորա Աստուածային զօրութիւնը, պիտի տեսնես մեհնիցդ կործանումը, և նոցա աւերակաց վերայ բարձրացած այս յաղթական սուրբ փայտս՝ որ ի Պողոթայ բարձրացաւ»:

Մոսկաց թագաւորը, աղմկեցան իշխանք, իսկ քուրմք միաբերան կաղաղակեն. «Նրժանի է մահու, ո՞ թագաւոր, որ այս շքեղաշուք հանդէսս խռովելով՝ ղից և արքայիդ փառքը հայհոյեց, և ինչպէ՞ս մեք նորա մեղքին քաւութիւն մաղթեմք, և ղից զթութիւնը հայցեմք քեզ և աշխարհիդ համար, ինչպէ՞ս նոցա բազիններուն մօտենանք այսուհետև, կամ մեր նուիրական զոհերը մատուցանենք, զուցէ՞ սաստեն մեզ, զուցէ՞ վրէժխնդիր լինին, և նորա յանցանաց համար զմեզ սատակեն»:

Հագիւ քրմապետը սպառնալիքները վերջացուց, ամբոխը ապարանից չորս կողմը դիզուած սկսաւ աղաղակել և վրէժինդրութիւն բողոքել, ուստի որոշեց թագաւորը որ մահուան վճիռը տայ, և ահա երբոր կուզէր հրամայել թիկնապահներէն մին ներկայացաւ թագաւորին, և յայտնեց որ Սանդուխտ այն հանդիսին ներկայ պիտի գտնուի: Հրաման տուաւ իսկոյն զօրաց որ ամբոխը ցրուեն, թիկնապահք երթան Սանդուխտի ընդ առաջ, և Պաղեստինացւոյն մահուան դատակնիքը առ ժամբա մնայ:

(1. Եր-4-11)

ՄԿՐՏԻՉ ՊԱԼԵՍՏ.

1259-54

### ՊԱՏՄԱԿԱՆ

ՃՆՆԵՊԵՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՍՏԱՆՈՒՄԸ \*

Գ. Շ. ՅԵՀԱՏԱԿԱՐԱՆԻՑ ՀԱՆԱԾ.

1842 ԹԻՒ. 12 ՕԳՈՍՏՈՍԻ.

ՄԱՂԱՐԹՈՒ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆԳՈՒՄԸ.

Նոր էր առաւօտեան լուսնու մութը միմեանցից բաժանուում երբ զուրա եկի

(\*) Թէպէտ կիսով չափ հրատարակեալ է 1863 թուականում ի Տիփլիս հրատարակուող կ...նէ անուն Հանդիսի մէջ, բայց նոյն հանդիսին գաղտնիութեամբ գաղտնած էր այս ձեռագրերը: Ինչպէս շարունակութիւնը, և ըստ ինքրանաց

(Թագաւորիցը \*): Իմ հեան էին երկու հին ծառայքս, որոց մասին նախընթաց յիշատակարանում շատ իմ խօսացել: Հենց անց կացանք Աձի - քեօրիփիւ ասուած կամուրջն, որ կէս փարսանից աւելի հեռու է Թագաւորիցը բերդէն, պատահեցան ինձ հինգ զինուորուած ձիաւոր Պարսիկ ձանապարհորդներ իրանց սպասաւորներովը, սոցա մէջը մի քանիսը դէմքով ինձ ծանօթ էին երևում, վասն որոյ աչքով և զլիտով իրարու ողջունեցինք և յետոյ զրոյց մէջ ձգելով խմացայ՝ որ նոքա էլ մի և նոյն տեղն էին գնում, ուր և ես այս ինքն գնում էին կառավարութեան կողմից Մասիս լեռան տակիցը սկրսած մինչև Օրդուպատի մօտքերը Առուսաց և Պարսից սահմանազուլները՝ Արասի զետի ամենեքի պահապանների վիճակին վերահասու լինին, և մանաւանդ էտտեղուանքների՝ Պարսից հողէ վերայ բնակուած վայրենի Վուրդերի կամ թափառական ցեղերի աւազակութիւնները զըս-

հիղինակին այժմ սիրով հրատարակելով զայս Արարատ ամսագրոյս մէջ՝ հարկ էր որ կամխաւ հրատարակուած պարբերութիւնքը ևս ի միասին ամփոփելով ի ընթացի միտքով թեամբ:

Թ. Խ՜՛:

(\*) Շատերը կարծում են թէ այսօրուայ Ատրպատականի Թագաւորի ասուած քաղաքն է մեր հին Գագրէթ քաղաքը՝ մեծին Խոսրովից շինուած: մեր Գագրիժու նշմարանքը երևում է մինչև ցայսօր Գուրգիստանու և Ատրպատականի սահմաններումը՝ 2/3-ը ասացեալ կղզիանման տեղումը որոյ շուրջն են պատած երկու Թագաւոր և Զագաւթայի գետերը: այս տեղումը գտնուում է մի քարածայռ բլուրի որոյ ժայռերի վրայ սեղանաձև կրեր են գտնուում մինչև այսօր: